— Կը մնայ:

— Ի՞նչ պիտի շինէ:

— Պիտի գործէ այստեղի հայ-կաթոլիկների մէջ:

— Նա Վենետիկի վանքի կողմի՞ց է ուղարկուած:

— Ո՛չ, նա ազատ մարդ է, կգործէ իր սեփական միջոցներով: Նա հօրից բաւական ժառանգութիւն է ստացել:

— Եզուիտները չե՞ն հալածի նրան:

— Կը հալածեն: Բայց եթէ հալածանքից մարդիկ վախենալու լինէին, պէտք է ոչինչ չշինէին: Իսկ նա բաւական քաջութիւն ունի իր գործի համար:

Քաղաքից մօտաւորապէս երկու ժամ ճանապարհի տեւողութեամբ գնում էինք դէպի արեւելք, անցնելով մշակուած դաշտերի եւ գեղեցիկ, կանաչազարդ հովիտների միջով: Հեռուից երեւաց Աստղաբերդը: Նա կանգնած էր Տաւրոսի թեւքերից մէկի վրայ եւ, կարծես, զայրացած դէմքով նայում էր դէպի իր առջեւը դրուած խորին ձորերը ու լայնածաւալ հովիտները: Իմ սիրտը սկսեց դողալ: Մենք մօտենամ էինք հայոց դիցուհու ամրոցին: Այստեղ էր հիւրասիրում Տարօնի աստուածուհին մեր անպարտելի հսկաներից մէկին՝ Վահագնին: Այստեղ, գեղեցիկ աստուածուհու գրկի մէջ, հանգիստ էր առնում հսկան՝ իր ահռելի կռիւներից յետոյ վիշապների հետ: Սէրը, գգուանքը, հեշտութիւնը ամոքում էին վաստակած քաջի խոնջութիւնը:

Երբ հասանք լեռան ստորոտին, մեր առաջնորդը ներքեւում պահեց ձիաները, իսկ ես եւ Ասլանը սկսեցինք վեր բարձրանալ: Ամրոցի վիթխարի աշտարակներից մի քանիսը, բարձր պարիսպների մեծ մասը, դեռ կանգուն էին մնացել: Ներսի շինութիւնները փլատակների մի տխուր տեսարան էին ներկայացնում: Երեւում էին զանազան վիմափոր սենեակներ, քարանձաւներ, որոնք կիսով չափ կամ բոլորովին հողով լցուած էին: Պարզ երեւում էր, որ ոչ թէ ժամանակը պարբերաբար մաշել, տրորել էր այդ գեղեցիկ ամրոցը, այլ նա միանգամից մի սոսկալի կործանման զոհ էր դարձել: Տեղ-տեղ հողի եւ քարակոյտի տակից դուրս էին նայում այրուած, ածուխ դարձած գերանների ծայրերը: Ակներեւ էր, որ մի ժամանակ կրակը այստեղ սարսափելի գործ էր կատարել:

Ասլանը նստեց մի քարի վրայ, ուր մամուռը սփռել էր իր թաւիշեայ կանաչագոյն գորգը: Նա հրաւիրեց ինձ նստել իր մօտ: Վաղորդեան արեգակը լուսաւորում էր նրա մտախոհ դէմքը: Ես երբեք չէի տեսել նրան այնպէս ընկղմուած մտածութիւնների մէջ: Մի քանի րոպէ լուռ նայում էր նա փշոտ դժնիկի վրայ, որ բուսել էր մի սիւնի խորտակուած պատոանդանի ճեղքից եւ